

**ՂԱՍԱԲ-ՕՂԼԻՆ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
քարքառ (խոսվածք)**

Ժամանակով կար մի թագավոր, էդ թագավորը Դունիա-գոգալին կուզեր: Դա շատ շխար էլավ, կարաց ոչ Դունիա-գոգալին առնել:

Թագավոր օրին մի օր տեհավ, որ իր տղեն խարաբ ա ըլլում: Ասեց թե.— Տղա՛, քու ուտելիքը չի պակսի, քու հագնելիքը չի պակսի, դուն խի՞ ես խարաբ ըլլում:

Նրհա ասավ, թե.— Ապի՛, ես Դունիա-գոգալին եմ ուզում:

Նա էլ էդ տարավ տղին մի լավ սիլլա տվուց, թե.— Ես չի կարացի ուզել, դուն ի՞նչ ես:

Նրհա, տղեն հորիցը խռովեց: Վե կացավ հենց ըդու էլավ: Դա գնաց իմացավ, որ մի տեղ, մի Ղասաբ-օղլի կա, գնաց հենց Ղասաբօղլու տուն:

Ղասաբ-օղլուն ըսաց տղեն.— Սերն աստծու խաթեր, ես եկեմ քո կուշտը, ուզում եմ, որ Դունիա-գոգալին ինձ համար բերես:

Դա ասավ, թե.— Որդի՛, իմ կուշտն ես իկե, քու խոսքը անտես չեմ անի, գնա ուստենուն ասա, ինձ համար մի երկաթից ճիպոտ շինեն:

Դարբինը չորս-հինգ ըշակերտ թոփ արավ կլուեցին մի եքա զարուգամբի երկաթից ճիպոտ ընդեղ վեր գցեցին:

Էդ տղեն ասավ, թե.— Մի՞ թե մարդ կարելի ա էսի վեր քաշած ըլլի:

Ղասաբ-օղլին իրիկունը մթան էկավ: Էկավ ճիպոտը վերցուց, ասավ.— Քիչ թեթև ա ըլել:

Վեր կացան ճնապարհ ընգան դրբա Դունիա-գոգալին:

Դրանք գնացին ուշապնու դուրուղում վեր էկան, հանգստացան:

Ուշապների մեկը հընդիան ճվաց:

Ասաց թե.— Օձն իրան պորտովը, դուշն իրան թևովը գալ չեն իմ տեղը, դուն ի՞նչ մըրգանեն միլլեթ ես, որ էկել ես:

Դա ասաց.— Վըրես Բարկանալ մի, ջափա քաշի ճիպոտս ինձի տուր, գնամ:

Հենց դա կռացավ, ջափա քաշեց, դես ընկավ, դեն ընկավ, կարաց ոչ վերունի, իրան տա:

Ուշապու մեկ աղբերն էլ էկավ, ճվաց, թե.— Իմ դուրուղից դուրս էլեք:

Ղասաբօղլին ասեց.— Ջափա քաշեցեք, ճիպոտս տվեք, ես գնում եմ:

Էլի չալիշ էկավ, չալիշ էկավ՝ չի կարաց վերցնել:

Դրանց դի տալով, մյուս չորսն էլ էկան. դրանք դի տվին, Բարկացան իրանց ախպորտանց վրա:

Ասին.— Խի՞ չեք կապոտում դրանց, բերեք մեր մոտ:

Դրհանք էկան. Ղասաբ-օղլին ասավ դրանց.— Ջափա քաշեցե՛ք, ճիպոտըս ինձի տվեք, ես գնամ:

Դրհանք օխտն էլ չալիշ էկան, կարացին ոչ թե վերցնեն: Դրհանց թուքը ցամաքեց, դրհանք վախեցան:

Ղասաբ-օղլուն ասացին.— Արի գնանք մեր մոտ, Դունիա-գոգալը օխտն աղբոր քիր ա, հենց իմ դուրուղումն ա:

Ղասաբ-օղլին ու էդ տղեն գնացին դրանց տունը:

Դրանց ասեց Ղասաբ-օղլին.— Կարելի կըլլի ձեր քիրը տված ըլլիք էս տղին, ինքն էլ թագավորի որդի ա:

Ասին.— Կտա՛նք, խո դրանն լավ տղի չալիտի տանք:

Աղջիկը՝ Դունիա-գոգալը տվին տղին:

Ղասաբ-օղլին և դնին գնացին ֆորս: Դնանք Ղասաբ-օղլուն ուրիշ կողմի վրա դարգեցին, էն տեղ ուրիշ դն կար, գլխավոր էր, ուզեին թե դրան ոչնչացնեն:

Դա գնաց տեհավ էրկու ուշապ գլուխները հիբարու վրա դրած, թշափում են դրա վրա, որ ուտեն: Դա ճիպոտը եղ թեքեց, դրանց գլխու վրա դրուց, ճիպտի ծերիցը կպան:

Դա վերցրուց դրանց պոռոնները կտրատեց, գցեց աղուխը, բերուց տուն:

Ուշապները ըրիկունը տեհան, որ ըհա նրանց պոռոնները պերել ա, դրանց թուքը ցըմաքեց:

Էն տղի ու աղջկա ձեռին վեց հատ բլանիք կա, հինգը դուռ բաց արել ա, մեկը մնացել:

Տղան ասավ.— Բի էս մինն էլ բաց անենք:

Աղջիկն ասավ.— Չի՛ կարելի:

Տըղեն կնկանը գոռեց:

Ասավ, թե.— Բի՛ բաց անենք:

Դրանք բաց արին, տեհան, որ տանը մի մարդ կա, ինքը մի թիզ՝ պառավ, ծեր մարդ ա, փետքաշով կապած:

Դա ասավ էղ աղին.— Խնդրում եմ էղ ջուրը, մի ջափա քաշի, պորնգիս դի:

Տղեն ջուրը դրուց պորնգին:

Մարդն էլի ասավ.— Թինգուքիս ածա մըխելի էղ քացախից:

Դա ձեռը տակը տվուց, տվուց թինգուքին: Կապած մարդը փետքաշը կտրեց, էղ տարավ մի չորս սիլլա տվուց տղին վեր գցեց, Դունիա-գոզալին վե կալավ, Սն ծովի, Սպիտակ ծովի արանքը տարավ:

Խաբարը տանք Ղասաբօղլուն: Ղասաբ-օղլին եկավ իմացավ, որ տարել են Դունիա-գոզալին:

Էն տղեն էլ հենց նվաղել է:

Գալիս ա ջուր տալի, է՛ն տղեն էղ բերում:

Ասում ա.— Էս ո՞նց էլավ:

Տղեն ասում ա.— Ես բան չի գլխի էլա:

Ղասաբ-օղլին գալիս ա ուշաբների կուշտը, տղին կշեռքի վրա դնում, քաշում ա: Նա դե հա՛ չորս փութ ա:

Ասեց, թե.— Կգա՛մ, կտենում կշինեք հինգ փութը:

Նա վե կացավ գնաց: Գնաց տեհավ իրեք օքմին կռիվ են գցի: Դրանք ունեն իրեքը մի գազի, մի խալիչա, մեկ էլ մի դամշի:

Ղասաբ-օղլին ասավ, էն իրեք հոգուն.— Սա չաչեն, խալիչեն, դամշին ի՞նչ հունարի տեր ա: Էս իրեք հոգին ասին.— Սա էն հունարի տերն ա, որ վրեն նստես հա, ասե թե. «Քու տիրոնջ ֆոգին կսիրես, քեզ փլան տեղն եմ ուզում»:

Ղասաբ-օղլին ասում ա.— Կաց ես դրան քիչ փորձեմ, տեսնեմ գնում ա, թե գնում չի:

Ասում ա թե.— Քու տիրոնջ ֆոգին կսիրես, քեզ,— ասում ա,— ուզում եմ Սն ծովի, Սպիտակ ծովի ըրանքումը:

Մին էլ տենում ա, որ Սն ծովի, Սպիտակ ծովի ըրանքն ա:

Նա գնաց տեհավ, ուշաբը քուն մտած ա:

Ասեց.— Աղջի՛, վի կաց գնանք:

Դա ըսավ, թե.— Ուշաբի ֆոգին իրա ձեռին չի, քեզ կտորում ա:

Ղասաբ-օղլին ասավ դրան, թե.— Դու ուշաբի տեղը նեղի, դա բալի իրան ֆոգու տեղը ասի:

Աղջիկն ասում ա.— Լա՛վ:

— Դո՛ւ,— ասում ա ուշապին,— քու ֆոգու տեղը ինձ ասա, հետը գրից անեմ:

Նա ըսավ.— Փլան պըտաշարումը մի դութի կա, դութու միջին իրեք ծոխի ճուտ կա, էղ ծոխի ճուտերն հենց իմ ֆոգին ա:

Դա Ղասաբ-օղլուն ասում ա, Ղասաբ-օղլին վեր ա կենում ճանապարհ ընկնում, գնում ա, որ էդ ճուտերին մոտենա:

Գնաց ճուտերի մեկի շլինքը պոկեց, ուշաբը, դպա նրան վազ տալով գնում ա:

— Քի՛չ,— ասում ա,— դուն միոլ տու, ես քեզ հասնեմ:

Նա քիչ մոտանում ա, ճուտերի ճիտը Ղասաբ-օղլին պոկում ա: Ուշաբը վեր ա ընկնում:

Ղասաբ-օղլին ուշաբու պոռոտները կտրատում ա, դնում աղուխումը: Վեր ա կենում, Դունիա-գոգալին վերնում, գալիս ա թագավորի տղի մոտ:

Ճանապարհում գալիս ա էն խալիչեն, էն չաչեն, էն դամշին փայ անում իրանց տերերի վրա:

Գալիս ա ուշաբների կուշտը, քաշում, տենում ա, որ թագավորի տղեն հինգ փուրջ ա էկե:

Դրանք ըդու էլած դրպա թագավորի տուն են գալի:

Ղասաբ-օղլին տղին ասավ.— Խիզանին բի, ես գնամ կրակ անեմ, որ տըքանանք:

Գնում ա կրակ անում, տենում ա իրեք աղունակ գալիս ա դրա կողքին վեր գալի:

Աղունակն աղունակին ասում ա.— Աղջի ջա՛ն, գիտես ի՞նչ կա, Ղասաբ-օղլու աղաք թագավորը սեղան պտի տա, որ մատը տա փոքր ըլի, որ Դունիա-գոգալը մնա թագավորին:

Ով որ էդ խոսքը թագավորին ասի, ծնգներիցը հետ քար դառնա:

Ընդունք թռան գնացին: Մյուս էքսըն էկավ:

Ղասաբ-օղլին ասավ թե.— Ա՛յ տղա, խիզանին բե, ես գնամ ասեմ:

Որ կրակը վառեց, աղունակին էլի վեր էկան:

Միջնեկն ըսավ.— Աղջի ջա՛ն, գիտե՛ս ինչ կա, թագավորը օթախ պըտի ռախտի, որ Ղասաբ-օղլին նի մտնի, դրա վրա՝ դեղը վեր դառնա, Դունիա-գոգալը մնա թագավորին:

Աղունակին ասին.— Ով որ ասի, քար դառնա:

Թռան գնացին:

Վե կացան գնացին թագավորի տուն, տեհան ռախտած սեղանը էկավ: Սեղանին իրան

ճիպոտով տալիս ա, կեսը դեն ա գցում, կեսը՝ դեն:

Թագավորը դուս ա գալի ասում ա.— Գլխուս վրա տեղ ունիք, համեցեք:

Ղասաբ-օղլին ասում ա.— Թագավորն ապրած կենա, մենք ուժելի թավուր տեղը լայեղական չենք:

Նրանք գնում են մի խոզալանի մեջը մտնում:

Մի պառավ թագավորին ասում ա.— Թագավորն ապրած կենա, ի՞նչ կտաս, որ Ղասաբ-օղլուն դեղեմ, Դունիա-գոգալը քեզ մնա:

Պառավին թագավորն ասում ա.— Քու քաշով մին ոսկի կտամ:

Պառավը գալիս ա Ղասաբ-օղլու մոտ: Ուզում ա, որ դեղի, ճիպոտի ծերը վրեն ա դնում, ճիպտի ծերիցը կաչում ա:

Ըռավոտը վեր ա կենում Ղասաբ-օղլին, որ թագավորին ասած ըլլի իրան արած բաները:

Ասում ա.— Թագավորն ապրած կենա, ինձ հըմա ռախտած սեղան բերիր, որ ուտեմ մահանամ, որ Դունիա-գոգալը քեզ մնա:

Ասում ա թե չէ՝ ծնգներից հետ քար ա դառնում:

— Թագավորն ապրած կենա,— ասում է նա,— դուն օթախն ռախտ երիր, որ ես նի մտնեմ մեռնիմ, որ Դունիա-գոգալն քեզ մնա:

Ասում ա թե չէ, քար ա դառնում վեր ընկնում:

Թագավորը սարքում ա դոշուն կապելը, որ Դունիա-գոգալը տանի:

Դունիա-գոգալը Ղասաբ-օղլու ճիպոտը վեր ա կալել, դոշունին ետ ա տալի:

Տղեն ասում ա.— Լաց ըլլի, Ղասաբ-օղլու մին մի կուռը թաց արա, մին՝ մի կուռը:

Ղասաբ-օղլու խորիսը պատռեց: Նա վե կացավ:

— Օ՛,— ասավ,— Դունիա-գոգա՛լ, էս խի՞ դու ընծի վեր չես կացնի, որ ես վեր կենամ, դուն իմ ճիպոտը վեր ես կալե, ես ինքա՞ն եմ քնե:

Ղասաբ-օղլին ճիպոտը վերցնում ա: Թագավորի շլինքին տալիս ա, վեր ա գցում: Նորից գնում են թագավորի օթաղը, էն տղին հարսանիք են անում, նրան ընդրում թագավոր:

Ըստըծանե իրեք խնձոր վեր ընկնի, մինն՝ աստղին, մինը՝ լսողին, մյուսն՝ ալամ աշխարին: